014
4-21

# ՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## „ՅԵՂԻՐ ՊԱՏՐԱՍՏ ԽՍՀՄ-Ի ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ“

### ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

Հրատ. Հայկական ԽՍՀ Կարմիր Խաչի Կենտկոմի

ԵՐԵՎԱՆ 1939

614
4—21
20 JUL 2010
424 I

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## „ՅԵՂԻՐ ՊԱՏՐԱՍՏ ԽՍՀՄ-Ի ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ"

## ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ

Հրատ. Հայկական ԽՍՀ Կարմիր խաչի Կենտկոմի

ԵՐԵՎԱՆ 1939

3438
11 MAY 2013

Պատասխ. խմբագիր՝ Մ. Մարկոսյան
Տեխ. խմբագիր և սրբագր. Ս. Հախվերդյան

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

ՀԽՍՀ Ժողկոմխորհի հրատ. «Խորհ. Հայաստ.» տպարան, Յերևան
Պ. № 159 տիրաժ 6.000

Կ 3111-63

Հաստատում եմ.
Կ. Խաչի և Կիսալուս. գործադիր կոմիտեյի նախագահի պաշտոնակատար՝ ԳԼԵԲՈՎ

22 նոյեմբ. 1938 թ.

Հաստատում եմ
ԽՍՀՄ-ի Առժողկոմ տեղակալ՝
Ն. ԽՐԱՇՉԵՆԿՈՎ

25 նոյեմբ. 1938 թ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ՅԵՂԻՐ ՊԱՏՐԱՍՏ ԽՍՀՄ-Ի ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՆԱ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ.

Խորհրդային Միության պիոներները և դպրոցականները ջերմորեն են սիրում իրենց սոցիալիստական հայրենիքը և ժողովուրդների առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻՆ, իրենց ուրախ և յերջանիկ պատանիության կյանքի համար:

Խորհրդային Միության առողջ և կենսուրախ պատանիները ԽՍՀՄ-ի վողջ աշխատավորների հետ միասին պատրաստվում են մեր սիրելի հայրենիքի պաշտպանության համար՝ ֆաշիզմի հարձակումից:

*ԽՍՀՄ-ի Կարմիր Խաչի և Կարմիր կիսալուսնի ընկերությունների միության գործադիր կոմիտեն սահմանեց «Յեղիր պատրաստ ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանության» ՅԵՊԱՍՊ-ի նորմաները և կրծքանշան:*

*ՅԵՊԱՍՊ-ի նորմաներում մտցված են սանիտարական պաշտպանության և առողջության պաշտպանման վերաբերյալ գիտելիքների նորմաներ և հմտություն, որոնք պետք է յուրացնեն պիոներները և դպրոցականները:*

*Յուրաքանչյուր պիոներ և դպրոցական կարող է պատրաստվել և հանձնել «ՅԵՊԱՍՊ»-ի նորմաները:*

*Նորմաները հանձնող պիոներները և դպրոցականները ստանում են ՅԵՊԱՍՊ-ի կրծքանշաններ և այդ կրելու իրավունքի վկայականներ:*

*ՅԵՊԱՍՊ-ի նշանակիրների պատրաստումը և կրծքանշանների հանձնումը կազմակերպում են Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի կոմիտեները:*



## «ՅԵՂԻՐ ՊԱՏՐԱՍՏ ԽՍՀՄ-Ի ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» (ՅԵՊԱՍՊ-Ի)

Պատանեկական կրծքանշանների նորմաները դպրոցների 5-րդ—8-րդ դասարանների պիոներների և դպրոցականների համար·

## ԱՌԱՋԻՆ ՆՈՐՄԱ

### ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԽՍՀՄ-Ի ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1. *Իմանալ թե ինչպես աշխատավորները մեր յերկրում կատարելով ընկ. ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքները՝ մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունն ամրացնելու վերաբերյալ, Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների շարքերում պատրաստվում են ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանության համար:*

2. *Իմանալ դպրոցում, ճամբարում, սպորտ հրապարակում, պարկերում ինչպես կազմակերպել սանի-*

տարական պոստեր և թե դրանք ինչպես պետք է աշխատեն:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՆՈՐՄԱ

### ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ ՅԵՎ ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԻՆՉԵՎ ԲԺՇԿԻ ԳԱԼԸ

1. Իմանալ ինչպես պաշտպանել վերքն աղտոտվելուց:

2. Կարողանալ կանգնեցնել արյունահոսությունը ռետինե սեղմանի (ժգուտի) և ոլորանի միջոցով: Կարողանալ կանգնեցնել քթի արյունահոսությունը:

3. Կարողանալ ճիշտ ոգնություն ցույց տալ վերքերի, կոտրվածքների, վնասվածքների, հոդախախտումների, ջարդվածքների դեպքերում: Վիրակապ դնել գլխի, ձեռքի, ոտքի վրա, ոգտվել փաթաթանից (բինտից) և կասինկայից: Գիտենալ ոգտվել վիրակապական անհատական ծրարից և սանիտարական պայուսակից (սումկայից):



4. Իմանալ ինչպես ճիշտ ոգնություն ցույց տալ ուզար յեղածին, ածխահոտից բռնվածի կամ շմոլքով հիվանդացածին. խեղդվելուց ազատելու դեպքերում, արևից խփվածին և տաքությունից չփվածին, ուշաթափության դեպքերում, այրվածքների, ցրտահարությունների դեպքերում, կատաղած կենդանիների կծելու, ոձի խայթելու, մեղվի կծելու դեպքերում:

5. Կարողանալ ձեռքերի վրա ընկերոջ փոխադրել 25—50 մետր տարածության վրա:

6. Իմանալ ինչպես և ինչպիսի դեպքերում կանչել շտապ և անհետաձգելի ոգնություն:

## ՅԵՐՐՈՐԴ ՆՈՐՄԱ

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻՑ

1. Իմանալ մարտական թունավոր նյութերի կազմությունը և թե ինչպես են դրանք ներգործում մարդու

վրա: Մարտական թունավոր նյութերի հիմնական խմբերը:

2. Իմանալ ինչպես է կառուցված հակագազը, կարողանալ հակագազը հագնել 5 վարկյանում և հագցնել տուժածին 10 վարկյանում:

3. Գիտենալ մարտական թունավոր նյութերի՝ իպրիտից, ֆոսգենից, քլորպիկրինից, ադամսիտից տուժածներին առաջին օգնությունն ինչպես ցույց տալ և ուր պետք է ուղարկել նրանց:

4. Իմանալ թե դպրոցականը ինչպես պետք է պահի իրեն օդաքիմիական հարձակման ժամանակ «օդային տագնապի», քիմիական տագնապի «ավարտանշանի» ազդանշանների դեպքերում:

5. Կարողանալ օգտվել հակաքիմիական ծրարից:



## ՉՈՐՐՈՐԴ ՆՈՐՄԱ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏԵՆԱ)

1. Իմանալ ինչու յե կարևոր պահպանել առողջաբանության անհատական կանոնները (մաքուր պահպանել մարմինը, մազերը, հագուստը, կոշիկները, մաքրել ատամները, կտրել յեղունգները, առավոտները կատարել ֆիզկուլտուրային վարժություններ): Իմանալ, ինչպիսի վնաս է հասցնում ծխելը:

2. Իմանալ իր անձնական առողջությունն ամրացնելու համար ինչպես օգտվել արևից, օդից և ջրից:

3. Իմանալ, թե դպրոցականը ինչպես պետք է պաշտպանի իրեն և շրջապատը վարակիչ հիվանդություններից և ինչու յե կատարվում նախազգուշացնող ներարկումները (սրսկումները, դեզինֆեկցիաները, դեզինսեկցիաները):

4. Իմանալ, ինչպես պահել իրեն

արշավների և էքսկուրսիաների ժամանակ:

5. Իմանալ, ինչպես խնամել աղտոտվելուց ջրհորները, գետերը և ավազանները:

6. Իմանալ և պահպանել փողոցների երթևեկության շարժման կարգը:



# ԾՐԱԳԻՐ

## «ՅԵՊԱՍՊ»-Ի ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

(5—8-րդ դասարանների աշակերտների համար— ծրագրում 12 պարապմունք)

### ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

*Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ-ում— սոցիալիզմի պայքարի և հաղթանակների արդյունքն է:*

*Կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության հոգատարությունը երեխաների վերաբերյալ: ԽՍՀ Միության երեխաները՝ աշխարհի ամենայերջանիկ երեխաներն են: Խորհրդային երեխաների ջերմագին սերը դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը: Խորհրդային երեխաների լոզունգն է «շնորհակալություն սիրելի ՍՏԱԼԻՆԻՆ երե-*

խաների յերջանկության համար»:

Նոր իմպերիալիստական պատերազմի սպառնալիքը, գերմանական և իտալական ֆաշիզմի ու ճապոնական թալանչիների փորձերը իսպանական և չինական ժողովուրդներին կեղեքելու համար:

Հաբեշստանի կեղեքումն իտալական ֆաշիզմի և Ավստրիայի զավթումն գերմանական ֆաշիզմի կողմից. Չեխոսլովակիայի մասնատումն արևմտյան յեվրոպական «դեմոկրատական» մեծ պետությունների թողտվության հետևանքով: Ֆաշիստական ագենտուրայի հետախուզական որգանների քայքայիչ գործունեյությունը, ճապոնական սամուրայների պրովոկացիան Խասան լճի մոտ և Պրիմորյայի մեր առաջին բանակի կողմից նրանց հասցրած կործանիչ հակահարվածը: Ֆաշիստները ԽՍՀ Միության վրա պատերազմ են պատրաստում:

Հայրենիքի պաշտպանությունը



ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտականությունն է, Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմը ԽՍՀՄ-ի սահմանների պաշտպանն են: Ընկ. ՍՏԱԼԻՆԻ պատասխանը կոմյերիտական Իվանովին այն մասին, վոր «հարկավոր է ամեն կերպ ուժեղացնել ու ամրացնել Կարմիր Բանակը, Կարմիր Նավատորմը, Կարմիր Ավիացիան և Պաշը-Ավիաքիմը: Հարկավոր է մեր ամբողջ ժողովուրդը մոբիլիզացիոն պատրաստության վիճակում պահել ռազմական վտանգի հանդեպ: Վորպեսզի վոչ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վոչ մի տեսակ ֆոկուսներ չկարողանան հանկարծակիի բերել մեզ:

Կարմիր Բանակին ոգտակար լինել՝ այդ նշանակում է— պատանի հասակից պատրաստվել ԽՍՀՄ-ի պաշտպանության համար:

Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունները ԲԳԿԲ և

Ռազմա–Ծովային Նավատորմի մերձավոր օգնականն են, նրանք ամրապնդում են ԽՍՀՄ-ի պաշտպանունակությունը:

Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի սանիտարական ինքնաթիռները, գնացքները, ավտոմեքենաները, սանիտարական դրուժինաները, և դրանց նշանակությունը պատերազմի և խաղաղ ժամանակներում:

Պատանիների մասսայորեն պատրաստումը «ՑԵՊԱՍՊ»-ի կրծքանշանի նորմաների հանձնման համար: «ՑԵՊԱՍՊ»-ի նշանի նորմաները և կանոնադրությունը:

Սանիտարական պոստերը դպրոցներում, ճամբարներում, յերեխաների պարկերում և նրանց նշանակությունը ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանության գործում:

Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի սանիտարական պոստերը օգնում են ԽՍՀՄ-ի հակաօդային պաշտպանության ամրացմանը: Սա-



նիտարական պոստերի դերը դպրոցում— մաքրության համար տարվող պայքարում:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՎ ՅԵՐՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

### Առաջին օգնությունը մինչև բժշկի գալը և վիրակապի դնելը

Հասկացողություն վերքերի, զարկերակային և արենադարձային արյունահոսության մասին: Արյունահոսությունը կանգնեցնելու կանոնների, սեղմանի (ժգուտի) դնման մասին:

Ինչպես պաշտպանել վերքը աղտոտումից:

Հասկացողություն վիրակապության հականեխված նյութերի մասին, վիրակապ դնողի ձեռքերի մաքրության, վիրակապի նշանակության, վիրակապ դնելու տեխնիկայի, անհատական վիրակապման ծրարի օգտագործման, կասինկայի, օգնությամբ կապելու մասին: Գլխի, ուսի, թաթի, ծնկի և ոտքի վրա կապ դնելու և սանիտարա-

կան պայուսակի մասին: Քթի արյունահոսությունը և օգնությունն այդ դեպքում: Հասկացողություն արյան ներարկման, դոնորարականության (արնատվության) մասին և նրա նշանակությունը:

## ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

**Առաջին օգնությունը վնասվածքների, ջարդվածքների և մարմնի հոդախախտումների դեպքերում, ռետինե սեղմանի կամ դողի (շինի) և փաթաթանի դնումը: Ձեռքի տակ գտնվող օժանդակ նյութերի օգտագործումը.**

Վոսկրային ջարդվածքները: Ամենից շատ հանդիպող վնասվածքները, ջարդվածքները և մարմնի հոդախախտումները. Ջարդվածքների և հոդախախտումների դեպքերում ցույց տրվող օգնության հիմնական կանոնները: Օգնությունը վնասվածքների դեպքերում: Ռեզինեդողը (շին) և նրա նշանակությունը: Ռետինե սեղմանի կամ դողնակապի դնելու ձևերը: Ձեռքի տակ գտնվող



Կ3111.63

նյութերը, վորոնք կարող են ծառայել, վորպես դող (շին) օգտագործելու համար:

Դողի դնումը վերին վերջավորության և ներքին վերջավորության վրա:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

**Առաջին օգնությունը դժբախտ պատահարների դեպքերում մինչև բժշկի գալը·**

Ուշարը (ածխահոտից բռնվածություն կամ շնչահեղձություն): Ուշարի նշանները: Օգնությունը ուշարով բռնվածին: Ուշաթափություն: Առաջին օգնությունը ուշաթափության դեպքերում: Արևահարություն և ջերմահարություն—դրանց պատճառները, դրանց կանխման միջոցները: Օգնությունը արևահարության և ջերմահարության դեպքերում: Գործնական պարապմունք: Արհեստական շնչառություն:

Այրվածքները և ցրտահարությունները. դրանց կանխման միջոցները: Առաջին օգնությունը այրվածքների և

Гос. Библиотека ՀՍՍՌ-ի ССР

ցրտահարությունների դեպքերում: Առաջին օգնությունը կատաղած անասունների կծելու, օձի, մեղվի և կարիճների կծելու դեպքերում և այլն:

## ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Թշնամու օդային, քիմիական հարձակումը մեզ հանկարծակիի չի բերի

Ընդհանուր տեղեկություններ օդային հարձակման մասին: Թունավոր նյութերի՝ իպրիտի, ֆոսգենի, քլորպիկրինի, ադամսիտի արտաքին նշանները և հոտը:

Հակաօդային պաշտպանության խնդիրները և միջոցները: Գազից պաշտպանվելու կայանները, բնակելի շենքի հարմարեցումը գազից պաշտպանվելու համար:

Ազգաբնակչության կազմակերպումը հակաօդային պաշտպանության պայմաններում: Ազդանշանները «օդային տագնապի», «քիմիական տագնապի», (ավարտանշանի) վերաբերյալ:



Ցերեխաների վարմունքի կանոնները այդ սիգնալների ժամանակ՝ դպրոցում, տանը, և փողոցում: Հակագազը և նրա կազմությունը. հակագազի հագնելու և հանելու ձևերը. հակագազի հագցնումը տուժածին:

Ընդհանուր տեղեկություններ մարդկանց օրգանիզմի վրա թունավոր նյութերի ներգործության մասին. կայուն և անկայուն թունավոր նյութեր. Մարտական թունավոր նյութերի հիմնական խմբերը: Իպրիտի ներգործությունը մաշկի և արցունքաթաղանթի վրա:

Հակաքիմիական ծրարը և նրանից օգտվելու կանոնները: Կայուն և անկայուն թունավոր նյութերից վնասվածին առաջին օգնություն ցույց տալը: Հասկացողություն լվացման կայանի և դեգազացիայի (գազահանման) մասին:

### ՅՈԹԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Պիոների և դպրոցականի անհատական առողջաբանությունը

Երեխաների առողջության պահպանումը ՍՍՀՄ-ում: Իրենց առողջությունը ամրացնելու վերաբերյալ ինչպիսի հոգատարություն պետք է ունենան յերեխաները:

Կանոնավոր կերպով լողանալը տանը և բաղնիսում: Սիստեմատիկ լըվացվելը մինչև գոտկատեղը, մազերի մաքրությունը, ձեռքերի և յեղունգների մաքրությունը, ատամների խնամքը, Ֆիզկուլտուրային սիստեմատիկ վարժությունները: Առողջաբանություն կոշիկների և հագուստի վերաբերյալ:

Պիոներների և դպրոցականի առողջապահությունը դպրոցում. բնակարանի մաքրությունը. սննդի առողջապահությունը. պարապմունքների և հանգստի առողջապահությունը: Երկարատեվ մնալ բաց օդում:

Խորհրդային յերեխաները ամուր,



առողջ, կենսուրախ և պատրաստ պետք է լինեն Հայրենիքի պաշտպանության համար:

### ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Նախապատրաստումն արշավի համար: Արշավային, օդային վաննաները և լողանալը

Ինչպես պատրաստվել էքսկուրսիայի և արշավի: Արշավի մասնակցի հանդերձավորումը: Բժշկական նախնական քննության նշանակությունը: Դադարի տեղի ընտրությունը: Սանիտարական հետազոտությունը: Արշավի ռեժիմում սանիտարական-առողջապահական պահանջները: Առողջապահական պահանջները օդային վաննա ընդունելու և լողանալու վերաբերյալ:

### ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Վարակիչ հիվանդություններ

Ինչ են բացիլները: Բացիլների բացահայտումը: Բացիլների վտան-

գավորությունը մարդու համար: Մեր մարմնում, ինչպես է անցնում վարակը հիվանդի հետ անմիջապես շփում ունենալիս, օդի, ջրի, լորձունքի, թուքի ցայտումից, սննդանյութերի, միջատների (մոծակներ, վոջիլ), մարդկանցից վարակված զանազան առարկաների, հիվանդի հետ շփում ունեցողի միջոցով:

Հասկացողություն վարակի և վարակի հիմնական աղբյուրների մասին (հիվանդը, բացիլակիրը) կեղտոտ ձեռքերի դերը վարակիչ հիվանդությունների տարածման գործում: Ինչպես պաշտպանվել աղտոտված ջրից վարակվելուց:

Ինչպես են ոգնում դպրոցականները ջրամատակարարման կետերի պահպանման:

### ՏԱՍԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

### Վարակիչ հիվանդությունները և պայքարը նրանց դեմ

Յերեխաների հիվանդությունների պակասումը ԽՍՀՄ-ում: Յերեխաների վարակիչ հիվանդությունները՝



կարմրուկ, քութեշ, դիֆտերիտ: Ստամոքսա-աղիքային, վարակիչ հիվանդությունները: Մալարիա, բծավոր տիֆ, պայքարը վարակիչ հիվանդությունների դեմ:

Նախազգուշական ներարկումների (սրսկումների) նշանակությունը: Հիվանդի մեկուսացումը: Հիվանդանոցայնության նշանակությունը: Հասկացողություն կարանտինայի մասին: Դեզինֆեկցիա և դեզինսեկցիա: Հակահամաճարակային միջոցառումներ յերեխաների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու գործում:

Անձնական առողջարանության և առողջության ընդհանուր ամրացման նշանակությունը, վարակիչ հիվանդությունների դեմ հաջող և արագ պայքար տանելում:

Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի սանիտարական պոստերի խնդիրները յերեխաների վարակիչ հիվանդությունների դեմ տարվող պայքարի գործում:

### ՏԱՍՆԵՎՄԵԿԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ
Հիվանդների խնամքը և վիրավորների փոխադրումը

*Խորհրդային կառավարության հոգատար վերաբերմունքը աշխատավորների առողջության և հիվանդների բուժման վերաբերյալ: Առողջապահական օրգանները և նրանց խընդիրները:*

*Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի ընկերությունները պատրաստում են բժշկական քույրեր, սանիտարական դրուժինաներ, ՊԱՍՊ-ի 1-ին և 2-րդ աստիճանի նշանակիրներ, որոնք պատերազմի ժամանակ խնամելու յեն հիվանդներին, վիրավորներին և օդային-քիմիական հարվածներից տուժածներին:*

*Հիվանդներին խնամելու ընդհանուր կանոնները:*

*Ինչպես չափել մարմնի ջերմաստիճանը: Զարկերակի և շնչառության հաշվումը: Շտապ օգնության դեղարկղը:*



*Վարակիչ հիվանդների խնամքը:*

*Ինչպես տեղափոխել հիվանդին և վիրավորվածին:*

*Պատգարակների կառուցվածքը: Ընկերոջ ձեռքերի վրա փոխադրելու վարժություններ:*

### ՏԱՍՆԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ
Փողոցների յերթևեկության շարժման կանոնների ուսումնասիրումը

*Յերեխաների փողոցային տրավմատիզմը, նրա պատճառները: Ծանոթացում փողոցների յերթևեկության շարժման կանոնների հետ: Փողոցների յերթևեկության կարգավորման բաժինների նշանակությունը: Ազդանշանները, որպես փողոցների յերթևեկության կարգավորիչներ:*

*Աշխույժ ավտոշարժման պայմաններում փողոցներով և հրապարակներով հետիոտն յերթևեկության կանոնները:*

*Հեծանիվ քշելու կանոնները*

*Կրծքանշանակիրներն իրենք անխախտ կերպով պետք է պաշտպանեն յերթևեկության կանոնները և աշխատեն, վորպեսզի մյուս յերեխաները նույնպես անեն նույնը։*



## ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

«Յեղիր պատրաստ ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանության» դըպրոցների 3—4 դասարանների, պիոներների և դպրոցականների համար։

### ԱՌԱՋԻՆ ՆՈՐՄԱ

ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանության ամրապնդումը

*1. Իմանալ, թե դպրոցականն ինչպես պետք է պատրաստվի ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանության։*

*2. Իմանալ, թե ԽՍՀՄ-ի Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի ընկերությունններն ինչպես են օգնում մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության ամրապնդմանը։*

*3. Իմանալ, թե ինչի համար են հարկավոր Կարմիր Խաչի և Կարմիր կիսալուսնի սանիտարական պոստերը։*

## ՅԵՐԿՐՈՐԴ ՆՈՐՄԱ

### Մարտական թունավոր նյութերից պաշտպանվելը

1. Գաղափար ունենալ իպրիտի, ֆոսգենի, քլոր–պիկրինի, ադամսիտ թունավոր նյութերի մասին:

2. Գաղափար ունենալ մարդկանց մարմնի վրա այդ մարտական թունավոր նյութերի ներգործության մասին:

3. Իմանալ ինչպես է կառուցված յերեխաների հակագազը և կարողանալ ոգտվել նրանից:

4. Գիտենալ ինչի համար է հակաքիմիական ծրարը և ինչպես ոգտվել նրանից:

5. Իմանալ դպրոցականն ինչպես պետք է իրեն պահի ոդային քիմիական հարձակման ժամանակ:

## ՅԵՐՐՈՐԴ ՆՈՐՄԱ

### Առաջին ոգնությունը մինչև բժշկի գալը

1. Կարողանալ հրավիրել բժիշկ և շտապ ոգնություն դժբախտ դեպքերի ժամանակ:



2. Կարողանալ առաջին ոգնություն ցույց տալ քթի արյունահոսության ժամանակ:

3. Կարողանալ ոգնություն ցույց տալ վնասվածքների և կտրվածքների դեպքերում:

4. Կարողանալ առաջին ոգնություն ցույց տալ մեղուների, ոձերի, կատաղած անասունների կծելու դեպքերում:

5. Կարողանալ վիրակապ դնել գլխի, թաթի և ոտքի վրա:

6. Կարողանալ ճիշտ ոգնություն ցույց տալ ածխահոտով բռնվածին:

## ՉՈՐՐՈՐԴ ՆՈՐՄԱ

### Պիոներների և դպրոցականների մաքրությունն ու առողջապահությունը

1. Գիտենալ և պահպանել անձնական առողջապահությունը (մաքուր պահել մարմինը, հագուստեղենը, կոշիկները, լվանալ ձեռքերը, կտրել յեղունգները, մաքրել ատամները, կատարել ֆիզկուլտ վարժություններ):

2. Իմանալ, թե յերեխաներն ինչպես կարող են նախապաշտպանել իրենց և շրջապատը վարակիչ հիվանդություններից:

3. Իմանալ, թե ինչպես է հարկավոր մաքուր պահել բնակարանը և կատարել օդափոխություն:

4. Իմանալ և պահպանել դպրոցի մաքրապահության կանոնները:

5. Իմանալ, թե ինչպես ճիշտ օգտվել արևից, օդից և ջրից:

6. Իմանալ և պահպանել փողոցներով յերթևեկելու կանոնները:



# ԾՐԱԳԻՐ

## 3-րդ և 4-րդ դասարանների դպրոցականներին «ՅԵՊԱՍՊ»-ի նորմաների հանձնմանը պատրաստելու համար

(Ծրագրում ութ պարապմունք)

### ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

*Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ-ում մղած պայքարի և հաղթանակների արդյունքն է:*

*Կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության հոգատարությունը մեր յերեխաների նկատմամբ: ԽՍՀՄ-ի յերեխաները աշխարհի ամենայերջանիկ յերեխաներն են:*

*Խորհրդային յերեխաների ջերմագին սերը դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը: Խորհրդային յերեխաների լոզունգն է «Շնորհակալություն, սիրելի ՍՏԱԼԻՆ, մեր յերջանիկ մանկության համար»: Իմպերիալիստական նոր պատերազմի սպառնալիքը, գերմանական և իտա-*

լական ֆաշիզմի թալանչիական փորձերը կեղեքելու հերոսական Իսպանիայի և Չինաստանի ժողովուրդներին։

Հաբեշստանի կեղեքումը ֆաշիզմի կողմից և Ավստրիայի գավթումը գերմանական ֆաշիզմի կողմից Յեվրոպայի «դեմոկրատական» մեծ պետությունների թողտվության հետեվանքով։

Ֆաշիստական հետախուզական օրգանների ագենտուրայի քայքայիչ աշխատանքը ԽՍՀՄ-ում․ յապոնական սամուրայների պրովոկացիան Խասան լճի սահմաններում և մեր Պրիմորիայի առաջին բանակի կործանիչ հակահարվածը։

Ֆաշիստները պատերազմ են պատրաստում ԽՍՀՄ-ի դեմ։

Խորհրդային հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտականությունն է։ Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմը ԽՍՀՄ-ի



սահմանների պաշտպանության դիրքերում։

Ընկ. ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքները մոբիլիզացիոն պատրաստականության և Կարմիր Բանակի, Կարմիր Նավատորմի, Կարմիր Ավիացիայի և Պաջր–Ավիաքիմի ուժեղացման ու ամրապնդման անհրաժեշտության մասին։

Կարմիր Բանակին օգտակար լինել՝ նշանակում է պատանի հասակից պատրաստվել ԽՍՀՄ-ի պաշտպանության համար։

Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունները Բ.Գ.Կ.Բ. և Ռազմա-Ծովային Նավատորմի մերձավոր օգնականներն են, նրանք ամրացնում են ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանությունը։

Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի սանիտարական ինքնաթիռները, գնացքները, ավտոմեքենաները, սանիտարական դրուժինաները և դրանց նշանակությունը պատերազմի ու խաղաղ ժամանակներում։ Յերե-

խաների մասսայորեն պատրաստումը ՅԵՊԱՍՊ-ի կրծքանշանի նորմաների հանձնման համար։ «ՅԵՊԱՍՊ»-ի կրծքանշանի նորմաների հանձնման կանոնադրությունը։

Սանիտարական պոստերի դերը դպրոցներում, ճամբարներում, յերեխաների պարկերում և նրանց նշանակությունը ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանության գործում։

Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի սանիտարական պոստերն ոգնում են ԽՍՀՄ-ի հակաօդային պաշտպանության ամրացմանը։

Սանիտարական պոստերը—դպրոցում մաքրության համար տարվող պայքարում։

### ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ընդհանուր տեղեկություններ ոդա-քիմիական հարձակումների մասին։

Թունավորող ամենագլխավոր նյութերը։

Հասկացողություն իպրիտի, ֆոս-



գենի, քլոր-պիկրինի, ադամսիտի մասին. մարդու մարմնի մեջ դրանց ներթափանցելու ուղիները։ Թունավոր նյութերից պաշտպանվելու միջոցները։ Յերեխաների հակագազը և նրանից ոգտվել կարողանալը։ Բնակելի շենքի հարմարեցումը գազապաշտպանության համար։

Դպրոցականը ինչպես պետք է պահի իրեն ոդաքիմիական հարձակման ժամանակ։

Կայուն և անկայուն թունավոր նյութերը։ Իպրիտի ներգործումը մարդու մարմնի վրա։ Հակաքիմիական ծրարը։ Ինչպես ոգտվել հակաքիմիական ծրարից։ Գործնական վարժություններ հակագազի հագնումն իր վրա և հագցնումը ընկերոջը։

### ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Ինչով են վտանգավոր մարմնի կտրվածքները և վերքերը։ Արյունահոսությունը։ Աղտոտության վտանգավորությունը, ինչպես պաշտպա-

նել վերքը աղտոտումից: Ինչպես կանգնեցնել քթի արնահոսությունը:

Վիրավորված դաստակի, ոտքի և գլխի վրա վիրակապ դնելու հիմնական ձևերը: Ձեռքի կրծաքաշումն գլխակապի (կասինկայի) միջոցով: Գլխակապի օգտագործումը վիրակապ դնելու համար: Վիրակապ դնողի ձեռքերի մաքրությունը: Վիրակապ դնելու գործնական վարժություններ: Առաջին օգնությունը վնասվածքների ժամանակ: Հասկացողություն հոդախախտումների և ջարդվածքների դեպքերում առաջին օգնության մասին:

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ուգարի (ածխահոտից բռնվելու, շմոլքով հիվանդանալու, չփանց լինելու) նշանները: Օգնություն ուգար յեղածին: Ուշաթափության նշանները. առաջին օգնությունը ուշաթափության ժամանակ: Արևահարություն: Օգնություն արևահարության դեպքում: Արհեստական շնչառու-



թյուն: Առաջին օգնությունը մեղուների, օձերի, կատաղած անասունների կծելու դեպքերում:

### ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Յերեխաների առողջության պաշտպանությունը ԽՍՀՄ-ում: Յերեխաների հիվանդությունների պակասումը ԽՍՀՄ-ում:

Անձնական առողջապահության նշանակությունը յերեխաների առողջության ամրացման համար: Յերեխաներն ինչպես պետք է պահպանեն անձնական առողջաբանության կանոնները: Մարմնի լվանալը, ատամների մաքրումը, հագուստի և վոտնամանների մաքուր պահելը: Արևից, օդից, ջրից օգտվելու կանոնները:

Առավոտյան ֆիզկուլտուրային վարժությունների նշանակությունը: Առողջ քնի կանոնները: Որվա ռեժիմը: Բնակարանի մաքրությունը և

մաքրելու կանոնները, բնակելի շենքերի օդամաքրումը:

Դպրոցում և տանը մաքրություն պահպանելու կանոնները:

### ՅՈԹԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Վարակը ինչպես է ընկնում մարմնի մեջ: Միջատները վարակի կրողներ են:

Ինչպես զգուշանալ սուր վարակիչ հիվանդություններից:

Նախապաշտպանական ներարկումներ: Սուր վարակիչ հիվանդի մեկուսացումը: Ժամանակին բժշկի հրավիրումը:

Ինչպես պաշտպանել իրեն աղիքա-ստամոքսային հիվանդությունից:

Ուտելուց առաջ ձեռքերի լվանալը: Սննդի պահպանումը ճանճերից, փոշուց, չգործածել անլվա մրգեղեն, բանջարեղեն: Յեռացրած ջուրը և նրա նշանակությունը:



Աղտոտ ջուրն աղիքա-ստամոքսային հիվանդությամբ վարակվելու աղբյուրն է:

Դպրոցականների մասնակցությունը ջրամատակարարման կետերի պահպանության գործում:

### ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Փողոցներում յերեխաների հետ պատահող դժբախտ դեպքերի պատճառները:

Ինչպես է կատարվում յերթևեկության շարժման կարգավորումը:

Պատահական տրավմատիզմի հաճախակի պատճառները՝ այդ կանոնների խախտումներն են: Պայքարը փողոցների շարժման խախտողների դեմ: Շարժման նշանները, ազդանշանները և ցուցանշանները: Հետիոտն յերթևեկության կանոնները:

Փողոցում խաղալու վտանգավորությունը: Փողոցներում կանկիներով, լիժաներով, սայլակներով, ին–

ջու չի կարելի խաղալ: Փողոցների յերթևեկության շարժման կանոնները անխախտ կերպով իրենք «Յե պաս-ղիատներ»–ն են պահպանում և աշխատում են, վոր մյուս յերեխաները նույնը կատարեն:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան
NL0270328

3438